Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում
Առարկա. Հակամենաշնորհային կարգավորում

<u>Անոտացիա</u>
Աշխատատարությունը՝ *4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ*
Ստուգարք

Համառոտ նկարագրություն. «Հակամենաշնորհային կարգավորում» առարկայի ծրագիրը մշակված է բուհերի բարձր կուրսերի ուսանողների համար, որոնք ուսուցանում են տնտեսագիտական և իրավաբանական մասնագիտություններում: Առարկան ուղղված է մրցակցային իրավունքի ոսումնասիրմանը, ինչպես նաև պետական մրցակցային քաղաքականության առանձին իրականացումների ուսումնասիրությանը:

Առարկայի նպատակն է հանդիսանում ուսանողների մոտ ձևակերպել տնտեսությունում ձևավորվող մրցակցային հարաբերությունների էությունը և պետության դերը այդ հարաբերությունների կազմակերպման մեջ՝ սպառողների և մրցակիցների հետ հարաբերություններում հասարակական արդյունավետության և բարեխղճության սկզբունքների հիման վրա:

Առարկայի բովանդակությունը ներկայացվում է դասախոսությունների ընթացքում, իսկ գործնական պարապմունքների ընթացքում ուսումնասիրվում են իրական իրավիճակներ:

Առարկայի ընդհանուր ծավալն է 144 ակադեմիական ժամ, ինչը կազմում է 4 ակադեմիական կրեդիտ: 36 ժամը նախատեսված է դասախոսությունների, 36 ժամը՝ սեմինարների անցկացման և 72 ժամը՝ ինքնուրույն աշխատանքի համար:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. Առարկան փոխկապակցված է «Տնտեսության պետական կարգավորում» առարկայի հետ:

Ուսանողների գիտելիքների և հմտությունների նախնական մակարդակի նկատմամբ պահանջները. Առարկայի ուսումնասիրման նախապայմանն են հանդիսանում «Միկրոտնտեսագիտություն» և «Մակրոտնտեսագիտություն» առարկաների ուսումնասիրման ընթացքում ձեռք բերված գիտելիքները: